ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.3-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

09.03.2015

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք 14-րդ հոդված

Բագրատաշենի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ Բագրատաշենի գյուղապետարանի աշխատակազմում առկա հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
1. Բագրատաշենի գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ ծածկագիր (3.3-1):

Երկրորդ կարգի մասնագետը կատարում է քարտուղարի հանձնարարականները, մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը: Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ: Քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան:
Երկրորդ կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
ա) միջնակարգ կրթություն.
բ) <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացության, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեիր՝ դիպլոմ(ների), վկայական(ների), աշխատանքային

գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին,
գ) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակաչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
դ) մեկ լուսանկար (3*4 չափի),
ե) անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Փաստաթղթերն ընդունվում են Բագրատաշենի գյուղապետարանում և ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչությունում, ամեն օր ժամը 09:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ ր կիրակի օրերից:
Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Բագրատաշենի գյուղապետարանի աշխատակազմ (գ. Բագրատաշեն, հեռ.՝ 093-47-58-40), ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն:
Մրցույթը կկայանա 2015 թվականի ապրիլի 10-ին ժամը 12:00-ին՝ Բագրատաշենի գյուղապետարանում:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է մարտի 23-ը, ժամը՝ 18:00-ն:

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ գ. Բագրատաշեն 1-ին փողոց շենք 18

Հեռ..՝ +374 93 475840

Էլ. փոստ՝ bagratashen.tavush@mta.gov.am